Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագիր

Վարկ թիվ 8495-AM

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2015թ. սեպտեմբերի 21-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար

# Բովանդակություն

| | Էջ |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 1 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 5 |
| Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն | 7 |
| Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն | 9 |
| Հատուկ հաշվի հաշվետվություն | 11 |
| Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 13 |

# Անկախ աուդիտորի եզրակացություն

**Գրանթ Թորնթոն ՓԲԸ**
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. +374 10 260 964
Ֆ.+374 10 260 961

**Grant Thornton CJSC**
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia
T +374 10 260 964
F +374 10 260 961
www.grantthornton.am

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

*Կարծիք*

Մեր կողմից իրականացվել է Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) 8495-AM վարկային համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի համար (այսուհետ՝ «Ծրագիր» կամ «ԷՑԲԾ») ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները, Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունները, ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունները 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2015թ. սեպտեմբերի 21-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար, հատուկ հաշվի հաշվետվությունը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար, ինչպես նաև ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով, կից ծրագրի ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և 2015թ. սեպտեմբերի 21-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի և 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ստացված ֆոնդերի և ճանաչված ծախսերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ուղեցույցների, 8495-AM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների:

*Կարծիքի հիմքեր*

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ից և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ից (Ընկերություններ)՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Հանգամանքների լուսաբանում*

- Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ -ի և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ղեկավարությանը՝ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

- Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2.1-ի վրա, որտեղ նկարագրվում է, որ ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են այնպես, որ Ծրագիրն իրականացնողներից յուրաքանչյուրին վերաբերող գործարքներն ու մնացորդները ներկայացված են առանձին: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

*Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար*

Ընկերությունների ղեկավարությունը պատասխանատու է սույն ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ուղեցույցների, ինչպես նաև 8495-AM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների համաձայն պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ծրագրի ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ծրագրի ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ծրագրի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Grant Thornton

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Գագիկ Գյուլբուդաղյան

Տնօրեն

Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի պատասխանատու

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

2017թ. հունիսի 30

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

*Ծրագրի իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ*

Հազար դրամ

| | Ծանոթ. | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| *Ակտիվներ* | | | |
| Ծրագրի կուտակային ծախսեր | | 72,639 | 54,486 |
| Կանխավճարներ | 4 | 2,095,203 | - |
| Մնացորդներ բանկային հաշիվներում | 5 | 6,427 | - |
| | | 2,174,269 | 54,486 |
| Ընդամենը ակտիվներ | | 2,174,269 | 54,486 |
| *Ֆոնդեր* | | | |
| Ծրագրի կուտակային ֆինանսավորում | | 2,179,689 | 54,486 |
| Փոխարժեքային տարբերություն | | (5,420) | - |
| | | 2,174,269 | 54,486 |
| Ընդամենը ֆոնդեր | | 2,174,269 | 54,486 |

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2017թ. հունիսի 30-ին:

Արթուր Բաղդասարյան
Գլխավոր տնօրեն

Էմիլ Նիկողոսյան
Գլխավոր հաշվապահ

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

*Ծրագրի իրականացնող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ*

| Հազար դրամ | Ծանոթ. | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| *Ակտիվներ* | | | |
| Ծրագրի կուտակային ծախսեր | | 91,030 | 75,514 |
| Կանխավճարներ | 4 | 3,767,490 | - |
| Մնացորդներ բանկային հաշիվներում | 5 | 148,462 | - |
| | | 4,006,982 | 75,514 |
| Ընդամենը ակտիվներ | | 4,006,982 | 75,514 |
| *Ֆոնդեր* | | | |
| Ծրագրի կուտակային ֆինանսավորում | | 3,995,096 | 75,514 |
| Փոխարժեքային տարբերություն | | 11,886 | - |
| | | 4,006,982 | 75,514 |
| Ընդամենը ֆոնդեր | | 4,006,982 | 75,514 |

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2017թ. հունիսի 30-ին:

Սասուն Խաչատրյան
Գլխավոր տնօրեն

Գարի Ախոյան
Հաշվապահական բաժնի ղեկավար

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

*2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2015թ. սեպտեմբերի 21-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար*

*ԱՄՆ դոլար*

| | Փաստացի | | Պլանավորված | | Տարբերություն | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ժամանակաշրջանի համար | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | ժամանակաշրջանի համար | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | ժամանակաշրջանի համար | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Ծրագիր |
| *Ֆոնդերի աղբյուրներ (տե՛ս ծանոթ. 6)* | | | | | | | |
| ՎԶՄԲ վարկ 8495-AM | 130,000 | 130,000 | | | | | |
| Կառավարության համաֆինանսավորում | - | - | | | | | |
| «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ֆինանսավորում | - | - | | | | | |
| Ընդամենը | 130,000 | 130,000 | | | | | |
| Փոխարժեքային տարբերություն | - | - | | | | | |
| *Նվազեցնել. Ֆինանսավորման օգտագործում* | | | | | | | |
| Յոդված 1. Ծրագրի Մաս Ա.1, Ա.2, Ա.3, Մաս Բ և Մաս Գ.2-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր | - | - | - | - | - | - | 27,175,000 |
| Յոդված 2. Ծրագրի Մաս Ա.2, Ա.5 և Մաս Գ.1-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր | - | - | - | - | - | - | 37,687,500 |
| Սկզբնավճար | 130,000 | 130,000 | 130,000 | 130,000 | - | - | 130,000 |
| Ընդամենը | 130,000 | 130,000 | 130,000 | 130,000 | - | - | 64,992,500 |
| Շրջանառու կապիտալի զուտ աճ (տե՛ս ծանոթ. 7) | - | - | | | | | |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 13-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

*2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար*

*ԱՄՆ դոլար*

| | Փաստացի | | Պլանավորված | | Տարբերություն | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Տարվա համար | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Տարվա համար | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Տարվա համար | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Ծրագիր |
| *Ֆոնդերի աղբյուրներ (տե՛ս ծանոթ. 6)* | | | | | | | |
| ՎԶՄԲ վարկ 8495-AM | 4,817,706 | 4,947,706 | | | | | |
| Կառավարության համաֆինանսավորում | 1,206,876 | 1,206,876 | | | | | |
| «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ֆինանսավորում | 20,203 | 20,203 | | | | | |
| Ընդամենը | 6,044,785 | 6,174,785 | | | | | |
| Փոխարժեքային տարբերություն | 6,466 | 6,466 | | | | | |
| *Նվազեցնել. Ֆինանսավորման օգտագործում* | | | | | | | |
| Չողված 1. Ծրագրի Մաս Ա.1, Ա.2, Ա.3, Մաս Բ և Մաս Գ.2-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր | 18,153 | 18,153 | 1,749,100 | 1,749,100 | (1,730,947) | (1,730,947) | 27,175,000 |
| Չողված 2. Ծրագրի Մաս Ա.2, Ա.5 և Մաս Գ.1-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր | 15,516 | 15,516 | 3,163,829 | 3,163,829 | (3,148,313) | (3,148,313) | 37,687,500 |
| Սկզբնավճար | - | 130,000 | - | 130,000 | - | - | 130,000 |
| Ընդամենը | 33,669 | 163,669 | 4,912,929 | 5,042,929 | (4,879,260) | (4,879,260) | 64,992,500 |
| Շրջանառու կապիտալի զուտ աճ (տե՛ս ծանոթ. 7) | 6,017,582 | 6,017,582 | | | | | |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 13-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն

*2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2015թ. սեպտեմբերի 21-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար*

*ԱՄՆ դոլար*

| | Փաստացի | | Պլանավորված | | Տարբերություն | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ժամանա-կաշրջանի համար | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | ժամանա-կաշրջանի համար | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | ժամանա-կաշրջանի համար | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Ծրագիր |
| **Բաղադրիչ 1:** Էլեկտրահաղորդման ցանցի հզորացում | | | | | | | |
| <u>Ենթաբաղադրիչ 1(ա)</u> Աշնակում տեղակայված ԲԷՑ-ի էլէկտրական ենթակայանի վերականգնում | - | - | - | - | - | - | 20,525,000 |
| <u>Ենթաբաղադրիչ 1(բ)</u> ԵՋԷԿ-ի էլէկտրական ենթակայանի վերականգնում | - | - | - | - | - | - | 35,875,000 |
| <u>Ենթաբաղադրիչ 1(գ)</u> Յատուկ մեքենաների և տրանսպորտային միջոցների ձեռքբերում | - | - | - | - | - | - | 3,250,000 |
| <u>Ենթաբաղադրիչ 1(դ)</u> Ծրագրի իրականացման աջակցություն ԲԷՑ-ին | - | - | - | - | - | - | 212,500 |
| <u>Ենթաբաղադրիչ 1(ե)</u> Ծրագրի իրականացման աջակցություն ԵՋԷԿ -ին | - | - | - | - | - | - | 187,500 |
| **Բաղադրիչ 2:** Էլեկտրական համակարգի ղեկավարման բարելավում | | | | | | | |
| <u>Ենթաբաղադրիչ 2(ա)</u> Դիսպետչերական կենտրոնի հիմնում | - | - | - | - | - | - | 3,062,500 |
| <u>Ենթաբաղադրիչ 2(բ)</u> Ի Փի Էս Օ ՓԲԸ-ի համար դիսպետչերական կենտրոնի կառուցման նպատակով Ծրագրի իրականացման աջակցություն և վերահսկողություն | - | - | - | - | - | - | 62,500 |
| **Բաղադրիչ 3:** Էլեկտրաէներգիայի արտադրության նոր ծրագրի նախապատրաստում | | | | | | | |
| <u>Ենթաբաղադրիչ 3(ա)</u> Նոր ՅԳԿՏ ներդրման մշակում | - | - | - | - | - | - | 1,625,000 |
| <u>Ենթաբաղադրիչ 3(բ)</u> Ծրագրի աուդիտ | - | - | - | - | - | - | 62,500 |
| Սկզբնավճար | 130,000 | 130,000 | 130,000 | 130,000 | - | - | 130,000 |
| Ընդամենը | 130,000 | 130,000 | 130,000 | 130,000 | - | - | 64,992,500 |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 13-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն

*2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար*

*ԱՄՆ դոլար*

| | Փաստացի | | Պլանավորված | | Տարբերություն | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Տարվա համար | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Տարվա համար | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Տարվա համար | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Ծրագիր |
| **Բաղադրիչ 1:** Էլեկտրահաղորդման ցանցի հզորացում | | | | | | | |
| Ենթաբաղադրիչ 1(ա) Աշնակում տեղակայված ԲԷՑ-ի էլէկտրական ենթակայանի վերականգնում | 714 | 714 | 1,654,200 | 1,654,200 | (1,653,486) | (1,653,486) | 20,525,000 |
| Ենթաբաղադրիչ 1(բ) ԵԶԷԿ-ի էլէկտրական ենթակայանի վերականգնում | - | - | 3,088,693 | 3,088,693 | (3,088,693) | (3,088,693) | 35,875,000 |
| Ենթաբաղադրիչ 1(գ) Հատուկ մեքենաների և տրանսպորտային միջոցների ձեռքբերում | - | - | - | - | - | - | 3,250,000 |
| Ենթաբաղադրիչ 1(դ) Ծրագրի իրականացման աջակցություն ԲԷՑ-ին | - | - | - | - | - | - | 212,500 |
| Ենթաբաղադրիչ 1(ե) Ծրագրի իրականացման աջակցություն ԵԶԷԿ -ին | 15,516 | 15,516 | 75,136 | 75,136 | (59,620) | (59,620) | 187,500 |
| **Բաղադրիչ 2:** Էլեկտրական համակարգի ղեկավարման բարելավում | | | | | | | |
| Ենթաբաղադրիչ 2(ա) Դիսպետչերական կենտրոնի հիմնում | 2,000 | 2,000 | - | - | 2,000 | 2,000 | 3,062,500 |
| Ենթաբաղադրիչ 2(բ) Ի Փի Էս Օ ՓԲԸ-ի համար դիսպետչերական կենտրոնի կառուցման նպատակով Ծրագրի իրականացման աջակցություն և վերահսկողություն | 15,439 | 15,439 | 94,900 | 94,900 | (79,461) | (79,461) | 62,500 |
| **Բաղադրիչ 3:** Էլեկտրաէներգիայի արտադրության նոր ծրագրի նախապատրաստում | | | | | | | |
| Ենթաբաղադրիչ 3(ա) Նոր ՀՑԳՏ ներդրման մշակում | - | - | - | - | - | - | 1,625,000 |
| Ենթաբաղադրիչ 3(բ) Ծրագրի աուդիտ | - | - | - | - | - | - | 62,500 |
| Սկզբնավճար | - | 130,000 | - | 130,000 | - | - | 130,000 |
| Ընդամենը | 33,669 | 163,669 | 4,912,929 | 5,042,929 | (4,879,260) | (4,879,260) | 64,992,500 |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 13-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Հատուկ հաշվի հաշվետվություն

*<u>Ծրագրի իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ</u>*

*ՎԶՄԲ վարկ 8495-AM*

*2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար*

*ԱՄՆ դոլար*

| | | |
|---|---|---|
| Սկզբնական մնացորդ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ | | - |
| Ավելացնել. | | |
| Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն | - | |
| Դրամաշնորհի համալրում տարվա ընթացքում | 219,650 | |
| | 219,650 | 219,650 |
| Յատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1) | | 219,650 |
| Վերջնական մնացորդ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | 6,427 |
| Ավելացնել. | | |
| Տարվա ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար | 213,223 | |
| Ծառայության վճարներ (եթե առկա է) | - | |
| | 213,223 | 213,223 |
| Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին) | | - |
| Ընդամենը հաշվառված կանխավճար (2) | | 219,650 |
| Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2) | | - |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 13-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Հատուկ հաշվի հաշվետվություն

*<u>Ծրագրի իրականացնող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ</u>*

*ՎԶՄԲ վարկ 8495-AM*

*2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար*

*ԱՄՆ դոլար*

| | | |
|---|---|---|
| Սկզբնական մնացորդ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ | | - |
| Ավելացնել. | | |
| Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն | - | |
| Դրամաշնորհի համալրում տարվա ընթացքում | 400,000 | |
| | 400,000 | 400,000 |
| Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1) | | 400,000 |
| Վերջնական մնացորդ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | 148,451 |
| Ավելացնել. | | |
| Տարվա ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար | 251,549 | |
| Ծառայության վճարներ (եթե առկա է) | - | |
| | 251,549 | 251,549 |
| Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին) | | - |
| Ընդամենը հաշվառված կանխավճար (2) | | 400,000 |
| Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2) | | - |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող և 13-ից մինչև 20-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագիրը (այսուհետ՝ «Ծրագիր») ֆինանսավորվում է 2015թ. ապրիլի 8-ին կնքված թիվ 8495-AM վարկային համաձայնագրով՝ ստորագրված Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) և Հայաստանի Հանրապետության միջև:

Ծրագիրն իրականացվում է համատեղ՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից (միասին՝ «Ընկերություններ»):

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ («ԲԷՑ») ստեղծվել է ՀՀ Կառավարության 1998թ. հուլիսի 20-ի թիվ 450 որոշման հիման վրա «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման և ՀՀ կառավարության 1999թ. նոյեմբերի 23-ի թիվ 709 որոշման հիման վրա «Էներգետիկ օբյեկտների մասնագիտացված պահպանություն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու միջոցով, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերությանը միացման ճանապարհով: Ընկերությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկության, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերության և «Էներգետիկ օբյեկտների մասնագիտացված պահպանություն» պետական փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդն է:

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն («ԵՋԷԿ») ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության թիվ 538 որոշման հիման վրա, որի համաձայն «Երևանի Ջերմաէլեկտրակայանը» դարձել է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ:

Համաձայն 2015թ. օգոստոսի 14-ին Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ու «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի միջև ստորագրված ենթավարկային համաձայնագրի՝ Ֆինանսների նախարարությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին ու «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին է փոխանցել ՎԶՄԲ վարկ՝ 52,000,000 ԱՄՆ դոլար, որը պետք է օգտագործվի միայն Ծրագրի իրականացման նպատակով:

Ծրագրի նպատակն է հաղորդիչ ցանցի հուսալիության բարձրացումն ու թողունակության մեծացումը, ինչպես նաև աջակցել Հայաստանի Հանրապետությանը բարձրորակ էլեկտրաէներգիայի մատակարարման հարցում:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Էլեկտրահաղորդման ցանցի հզորացում

(ա) ԲԷՑ-ի Աշնակ էլեկտրական ենթակայանի վերակառուցումն ի թիվս այլնի՝ (ա) հիմնական սարքավորումների ամբողջական կամ մասնակի փոխարինման և /կամ վերականգնման, (բ) վերահսկողության և տվյալների ձեռքբերման համակարգի տեղադրման և (գ) հսկողության սենյակների համար նոր շենքի կառուցման միջոցով:

(բ) Երևանի ՋԷԿ-ի էլեկտրական ենթակայանի վերակառուցումն ի թիվս այլնի՝ (ա) հիմնական սարքավորումների ամբողջական կամ մասնակի փոխարինման, (բ) վերահսկողության և տվյալների ձեռքբերման համակարգի տեղադրման, (գ) հսկողության սենյակների համար նոր շենքի կառուցման և (դ) նշված ենթակայանից էլեկտրաէներգիայի մատակարարման համար պահանջվող հաղորդման օդային գծերի վերամիացման միջոցով:

(գ) ԲԷՑ-ին Օժանդակության տրամադրում՝ Ծրագրի իր Համապատասխան Մասերի, ի թիվս այլնի՝ Ծրագրի նշված Մասերի շրջանակում աշխատանքների իրականացման համար, այդ թվում՝ սույն Համաձայնագրի 2-րդ Ցանկի դրույթներին համապատասխանությունը վերահսկելու համար տեխնիկական աջակցության տրամադրման միջոցով,

(դ) Երևանի ՋԷԿ-ին Օժանդակության տրամադրում՝ Ծրագրի իր Համապատասխան Մասերի, ի թիվս այլնի՝ Ծրագրի նշված Մասերի շրջանակում աշխատանքների իրականացման համար, այդ թվում՝ սույն Համաձայնագրի 2-րդ Ցանկի դրույթներին համապատասխանությունը վերահսկելու համար տեխնիկական աջակցության տրամադրման միջոցով:

Բաղադրիչ 2. Էներգահամակարգի ղեկավարման բարելավում

(a) Կարգավարման պահուստային կենտրոնի ստեղծում, ի թիվս այլնի՝ (ա) ԲԷՑ-ի Գործառնական ձեռնարկում հիշատակվող՝ ընտրված շենքի ներքին մակերեսի վերանորոգման, (բ) անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման և տեղադրման և (գ) պահանջվող այլ աշխատանքների իրականացման միջոցով:

(բ) ԲԷՑ-ի համար նոր վարչական շենքի կառուցում:

Բաղադրիչ 3. Էլեկտրաէներգիայի արտադրության նոր ծրագրի նախապատրաստում

(ա) ՀՑԳՏ ներդրման նախագծի կազմում (առանց իրականացումը ներառելու), ներառյալ, ի թիվս այլնի, (ա) (Ա) ֆինանսական իրագործելիության ուսումնասիրության, (Բ) շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման իրականացում, (բ) մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորման համար պահանջվող գործարքների վերաբերյալ տեխնիկական աջակցության տրամադրում և (գ) ՀՑԳՏ ներդրման նախապատրաստման համար պահանջվող այլ տեխնիկական աջակցության տրամադրում:

(բ) Ծրագրի աուդիտների իրականացում:

Ծրագրի ֆինանսավորումը բաղկացած է հետևյալ մասերից.

| Յոդված | Վարկի հատկացված գումարը (արտահայտված ԱՄՆ դոլարով) | Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսը (առանց հարկերի) |
|---|---|---|
| (1) Ծրագրի Մաս Ա.1, Ա.2, Ա.3, Մաս Բ և Մաս Գ.2-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր | 27,740,000 | 80% |
| (2) Ծրագրի Մաս Ա.2, Ա.5 և Մաս Գ.1-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր | 30,130,000 | 80% |
| (3) Սկզբնական վճար | 130,000 | |
| Ընդամենը | 52,000,000 | |

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Չ. Անդրանիկի 1:

## 2 Պատրաստման հիմքերը

### 2.1 Յամապատասխանություն

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքով, ինչպես նաև Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ուղեցույցի հոդվածների և թիվ 8495-AM վարկային համաձայնագրի համապատասխան պահանջների համաձայն: Կարևոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունները բացահայտված են ստորև:

Այս ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հետևյալ կերպ.

- Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները յուրաքանչյուր Ընկերության համար ներկայացված են առանձին,

- Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը և ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը պատրաստված են համատեղ երկու Ընկերությունների համար: Այնուամենայնիվ, հաշվետվություններում բացահայտվում են ստացված և օգտագործված ֆինանսավորման աղբյուրները առանձին յուրաքանչյուր Ընկերության համար:

- Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները ներկայացված են այնպես, որ հաշվի մնացորդները և գործարքների դասերը ներկայացված են յուրաքանչյուր Ընկերության համար:

### 2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ): Այս ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (ներկայացման արժույթ):

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Համաշխարհային բանկի միջոցներից Ծրագրի գործընկերներին կատարված ներկայացման արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված ուղղակի վճարումները գրանցվում են client connection (https://clientconnection.worldbank.org) համակարգի փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցները, կանխավճարները և դեբիտորական պարտքերը վերահաշվարկվում են՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը. 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 483.94 ՀՀ դրամ (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 483.75 ՀՀ դրամ): Յուրաքանչյուր փոխարժեքային տարբերություն ճանաչվում է Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում, և փոխարժեքային տարբերության կուտակված գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Ֆոնդեր» հոդվածում:

## 2.3 Ծրագրի ֆինանսավորում

Թիվ 8495-AM վարկային համաձայնագրի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը հաշվառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «Ծրագրի կուտակային ֆինանսավորում» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ: Ի լրումն՝ տարվա ընթացքում ստացված ֆոնդերը բացահայտվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում:

## 2.4 Ծրագրային ծախսեր

Ծրագրային ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով: Ծրագրի կուտակային ծախսերը բացահայտվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ակտիվներում: Ի հավելումն՝ ընթացիկ տարվա ծախսերը ներառվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին և ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություններում:

## 2.5 ՎՋՄԲ ֆինանսավորում

Թիվ 8495-AM վարկային համաձայնագրի համար ընդունելի ծախսերի ֆինանսավորման նպատակով ՎՋՄԲ-ն վճարումներ է կատարում՝ օգտագործելով հետևյալ վճարման մեթոդներից մեկը կամ մի քանիսը.

ա) Հատուցում

Բանկը կարող է հատուցել փոխառուին՝ նրա սեփական միջոցներով կատարված ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

բ) Կանխավճար

Բանկը կարող է առհաշիվ վարկային վճարում կատարել փոխառուի հատուկ հաշվին՝ ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով և դրանց կատարմանը զուգընթաց, որոնց համար հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն ավելի ուշ:

գ) Ուղղակի վճարումներ

Բանկը փոխառուի հայցով կարող է վճարումներ կատարել ուղղակիորեն երրորդ անձանց՝ ընդունելի ծախսերի դիմաց:

դ) Հատուկ պարտավորագրեր

Բանկը կարող է վճարումներ կատարել երրորդ անձին հատուկ պարտավորագրի շրջանակներում ընդունելի ծախսերի փոխհատուցման համար փոխառուի գրավոր հաստատված հայցով, որը համաձայնեցված է փոխառուի և Բանկի կողմից:

## 3 Ծրագրի փակման ամսաթիվ

Համաձայն վարկային համաձայնագրի՝ Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2019թ. դեկտեմբերի 31-ը:

## 4 Կանխավճարներ

*Ծրագրի իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ*

| ԱՄՆ դոլար | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Քսիան Էլեկտրիկ Էնջինիրինգ ՍՊԸ | 1,834,327 | - |
| Կոնսուլեկտրա և Դեկոն Կոնսորցիում | 57,487 | - |
| Հայաստանի Հանրապետության պետական բյուջե | 203,389 | - |
| | 2,095,203 | - |

*Ծրագրի իրականացնող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ*

| ԱՄՆ դոլար | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Կոբրա Ինստալասիոնեսի Սերվիսիոս էս. էյ. | 1,698,558 | - |
| Էյ Բի Բի Էյ Բի ենթակայաններ | 1,727,765 | - |
| Հայաստանի Հանրապետության պետական բյուջե | 341,167 | - |
| | 3,767,490 | - |

## 5 Բանկային հաշիվների մնացորդներ

*Ծրագրի իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ*

| ԱՄՆ դոլար | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Հատուկ հաշիվ | 6,427 | - |
| Տեղական հաշիվ | - | - |
| | 6,427 | - |

*Ծրագրի իրականացնող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ*

| ԱՄՆ դոլար | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Յատուկ հաշիվ | 148,451 | - |
| Տեղական հաշիվ | 11 | - |
| | 148,462 | - |

## 6 Ծրագրի ֆինանսավորում

| ԱՄՆ դոլար | 2015թ. սեպտեմբերի 21-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ | | | | |
| ՎԶՄԲ վարկ 8495-AM | 54,486 | 1,688,746 | 1,743,232 | 54,486 |
| Կառավարության համաֆինանսավորում | - | 416,254 | 416,254 | - |
| «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ֆինանսավորում | - | 20,203 | 20,203 | - |
| «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ | | | | |
| ՎԶՄԲ վարկ 8495-AM | 75,514 | 3,128,960 | 3,204,474 | 75,514 |
| Կառավարության համաֆինանսավորում | - | 790,622 | 790,622 | - |
| | 130,000 | 6,044,785 | 6,174,785 | 130,000 |

ՎԶՄԲ ֆինանսավորումը ներկայացված է ստորև.

| ԱՄՆ դոլար | 2015թ. սեպտեմբերի 21-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Ուղղակի վճարներ | - | 4,198,056 | 4,198,056 |
| Կանխավճար | - | 619,650 | 619,650 |
| Սկզբնական վճար | 130,000 | - | 130,000 |
| | 130,000 | 4,817,706 | 4,947,706 |

## 7 Շրջանառու կապիտալի զուտ աճ

| ԱՄՆ դոլար | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Բանկային մնացորդներում աճ (ԲԷՑ) | 6,427 | 6,427 |
| Բանկային մնացորդներում աճ (ԵԶԷԿ) | 148,462 | 148,462 |
| Կանխավճարների աճ (ԲԷՑ) | 2,095,203 | 2,095,203 |
| Կանխավճարների աճ (ԵԶԷԿ) | 3,767,490 | 3,767,490 |
| | 6,017,582 | 6,017,582 |

## 8 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից ստացված գումարների և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի փոխհատուցումների համադրում

*8495-AM վարկային համաձայնագիր*
*2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*
*ԱՄՆ դոլար*

| Հոդված | Դիմում | ԲԷՑ | ՎԶՄԲ | Տարբերություն |
|---|---|---|---|---|
| Հոդված 1. Ծրագրի Մաս Ա.1, Ա.2, Ա.3, Մաս Բ և Մաս Գ.2-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր | | | | |
| | DA-7 | 1,469,096 | 1,469,096 | - |
| | | 1,469,096 | 1,469,096 | - |
| Հատուկ հաշվի կանխավճար | | | | |
| | DA-1 | 2,300 | 2,300 | - |
| | DA-2 | 1,150 | 1,150 | - |
| | DA-3 | 1,200 | 1,200 | - |
| | DA-4 | 1,100 | 1,100 | - |
| | DA-5 | 1,100 | 1,100 | - |
| | DA-6 | 1,300 | 1,300 | - |
| | DA-8 | 900 | 900 | - |
| | DA-9 | 116,000 | 116,000 | - |
| | DA-10 | 30,000 | 30,000 | - |
| | DA-11 | 1,600 | 1,600 | - |
| | DA-12 | 63,000 | 63,000 | - |
| | | 219,650 | 219,650 | - |
| Ընդամենը | | 1,688,746 | 1,688,746 | - |

*8495-AM վարկային համաձայնագիր*
*2015թ. սեպտեմբերի 21-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար*
*ԱՄՆ դոլար*

| Հոդված | Դիմում | ԲԷՑ | ՎԶՄԲ | Տարբերություն |
|---|---|---|---|---|
| Սկզբնավճար | | 54,486 | 54,486 | - |
| Ընդամենը | | 54,486 | 54,486 | - |

## 9 «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ կողմից ստացված գումարների և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի փոխհատուցումների համադրում

*8495-AM վարկային համաձայնագիր*
*2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*
*ԱՄՆ դոլար*

| Հոդված | Դիմում | ԵԶԷԿ | ՎԶՄԲ | Տարբերություն |
|---|---|---|---|---|
| Հոդված 2. Ծրագրի Մաս Ա.2, Ա.5 և Մաս Գ.1-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ` դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր | | | | |
| | DA-1-Y-01 | 400,000 | 400,000 | - |
| | | | | - |
| | | 400,000 | 400,000 | - |
| Հատուկ հաշվի կանխավճար | | | | |
| | DP-1-Y-02 | 516,572 | 516,572 | - |
| | DP-4-Y-05 | 120,835 | 120,835 | - |
| | DP-6-Y-07 | 978,628 | 978,628 | - |
| | DP-3-Y-04 | 30,140 | 30,140 | - |
| | DP-5-Y-06 | 277,200 | 277,200 | - |
| | DP-2-Y-03 | 805,585 | 805,585 | - |
| | | | | - |
| | | 2,728,960 | 2,728,960 | - |
| Ընդամենը | | 3,128,960 | 3,128,960 | - |

*8495-AM վարկային համաձայնագիր*
*2015թ. սեպտեմբերի 21-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար*
*ԱՄՆ դոլար*

| Հոդված | Դիմում | ԵԶԷԿ | ՎԶՄԲ | Տարբերություն |
|---|---|---|---|---|
| Սկզբնավճար | | 75,514 | 75,514 | - |
| Ընդամենը | | 75,514 | 75,514 | - |